

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ԲԱՐՈՑԱԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Կր իրաւաստիւնի առեւ ամայն սկիզբը:
Բաժանորդութեան ցիւմն է կամիւրի վճարելի՝ ծա-
րելանն 8 ֆրանք. — Վեցամսեայ՝ 5 ֆրանք: —
Մէկ թիւ առանձին՝ կը վճարուի 1 ֆրանքի:
Խմբագրութեան կենդրոնաւայրանն է՝ Վիեննա, Միւ-
խարեան Միաբանութեան Մայր վանքը:

Արեւելք՝ Խոստանցիկութիւնն են ի Զմիտումն՝ մոյճ
Միաբանութեան վաճառականներն կ'ընդո-
ւնոյն ստանց ծախքոյն ծախքոց:
Արեւելքի ուրիշ քաղաքներուն համար՝ չիլնալ վա-
ճառականներն կը սկսի ծախքոյն ծախքն հաշուի:
Ժամանցիկներն առանձին սակարկութեամբ:

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿՈՒՄՆԱԿԱՆ — Այլեւայլ վիճակք կամ դա-
սակարգք մարդկային ընկերութեան:
ՌԱՊԱՐԱՄԱՐԱԿԱՆ — Բնական եւ արուեստական բուն:
ԳՐԱԿԱՆ — Պատմութիւն այլ լրագրութեան:
ԼԵՃՈՒՆԱՐԱՄԱՐԱԿԱՆ — Հայերէն քանի մը բառերու
որոշ նշանակութիւնը:

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՊԱՐԱՄԱՐԱՆ ՆՈՐԱՎՋՊ — Գաւառիւն:
ԱՐԱԿ — Մասնակ եւ թրթումի:

ԱՐՈՒՆԵՍՏԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐԱՎՈՒՐ — ՏՆՏՆԱԿԱՆ — ՄԱՆՐԱՎՈՒՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԻՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿՈՒՄՆԱԿԱՆ

ԱՐՈՒՆԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Մարդ ի բնէ ընկերութեան համար ստեղ-
ծեալ կամ աշխարհիս վրայ ընկերական կեանք
վարելու սահմանեալ ըլլալով, բոլոր մարդիկ իբր
թէ միակ ընդհանուր ընկերութիւն կը կազմեն:
Այս ընդհանուր մարդկային ընկերութիւնը չնք
կրնար մտածել իբրեւ այնպիսի գումարութիւն,
որոյ մասունքը նիւթապէս կամ մեքենապէս միայն
մտ առ մտ դիզեալ՝ չնդեակոյտ մը ձեւացու-
ցած ըլլան: Միւթթիւնը զոր մարդիկ կը կազմեն
լրնկերութեան՝ չէ այնպիսի, որ անհատը իբրեւ
միաձեւ եւ անդամագործ կանգուածոյ մասունք
անշարժ ու անկերպան մնան: Մարդկային ընկե-
րութեան էութիւնն է, որ իւր մասունքն՝ միոյ
մարմնոյ անդամոց նման՝ իրարու հետ աղետա-
լիւնալ ըլլան, իրենց մէջ փոխադարձ կախումն
գտնուի, փոփոխակի մին միւսոյն վրայ ազդէ,

մին միւսին ի վեր կամ ի վար ըլլայ: Ընկե-
րական միութիւնը մեքենական չէ, այլ գործա-
րանաւոր. ուստի ընկերութիւնը չի կրնար մե-
քենականութեան հետ համեմատուիլ, այլ գոր-
ծարանաւորութեան հետ:

ՄԵԿԵՆԵՐ ԵՎ ԳՐԱՐԱՆԵՐ ՀԱՄԱՌՈՒՄ:

Մարդկային ընկերութիւնն անկենդան չէ,
այլ կենդանի բարոյական մարմին կամ ամբողջու-
թիւն: Արդ կենդանին այնու գլխաւորաբար կը զա-
նազանի անկենդանին, որ գործարանաւոր կ'ըլլայ,
ու որ անկենդանն ամենեւին գործարանաւորու-
թիւն չունենալով՝ կ'ըլլայ պարզապէս ըստ մե-
քենական օրինաց կազմեալ: Ասկէ կը հետեւի
թէ մարդկային ընկերութիւնն եւս կենդանի
մարմին ըլլալով, գործարանաւորութիւն ունե-
նալու, ուստի եւ անդամակերպ բաժանեալ ըլ-
լալու է, այս ինքն իւր մասունքն իբրեւ միոյ
մարմնոյ անդամը՝ իրարու հետ զոգեալ ըլլալով,
իւրաքանչիւր իւր պաշտօնն ունենալու է:

Դարձեալ՝ մարդիկ կամ մարդկային ընկե-
րութեան անդամք իրարու կարօտ են: Արդ՝ երբ
ամբողջութեան մասունքն իրարմէ փոփոխակի
այնպէս կարուամէ կ'ունենան, մին միւսոյն այնպէս
կարօտ կ'ըլլայ, որ մի մասն առանց միւս մասեց
չի կրնար իւր յատուկ գործունեութիւնն ի կիր
արկանել, նոյն ամբողջութիւնն՝ եթէ կենդանու-
թիւն ունի՝ Տարկ է գործարանաւոր ըլլալ: Վասն
զի՞ այս է ճիշդ կենդանական գործարանաւորու-
թեան յատկութիւնն, որ իւրաքանչիւր անդամն
իւր գործունեութեան, կենդանութեան ու զար-
գացման նկատմամբ՝ կախեալ է միւս անդամե-
րէն, եւ մի մասն առանց միւսոյն չի կրնար այն
մնայ՝ ինչ որ է անոր հետ. ու որ մեքենական
մարմնոյ կամ չնդեակութիւն իւրաքանչիւր մասն
նաեւ անդատեալ յայլոց կը մնայ ինչ որ էր ի
չնդեակութիւն: